Բ.

ԲԱՂԴԱՍԱՐ

Օղորմի տը[1]) տամ՝ օղորմի էն վարդապետին,
Օղորմի տը տամ՝ օղորմի էն Սանասարին,
Օղորմի տը տամ՝ օղորմի էն Բաղդասարին,
Օղորմի տը տամ՝ օղորմի էն օխտ ճեռղ Դաւթին,
Օղորմի տը տամ՝ օղորմի էն ականջ էրողներու անցաւորաց խոգուն[2]):

Վարդապետ Սանասար Բաղդասար առից, էկաւ մէ սարի մէջ բնակուաւ: Սանասար գնաց յարևելի կողմ քար բիրիլիւ, Բաղդասար յարևմտեան: Սանասար զԲաղդասարի պատ քակից, Բաղդասար Սանասարի. յետիւ ասըցին. «Էս ի՞նչ բան ի, մինք իրարու տուն կ'քանդի՞նք»:

Քար բիրին, ըսացըցին. ձեռ յիրար տուին, Աստուած կանչիցին, իրանց տուն իրարու խիտ[3]) շինիցին: Դարձան մէ պզտի[4]) եկեղեցի մ'էլ շինիցին: Սանասար ասաց. «Հայր սուրբ, միր տան անուն ի՞նչ տը դնինք»:

—Ո՛րդի, գնացէք ճամբէսի արալըս[5]) նստէք, մէ քեասիբ[6]) կ'ըլնի, Հարուստ կ'ըլնի, բիրէք, մեր տան խացկիրուԹիւն էնի, ըլնը մի[7]) տան անուն դնի, էրԹայ»:

Քեասիբ խալուոր[8]) մարդ բիրիցին, խացկիրուԹիւն արաւ:

—Էս տան անուն տիր, տըսնանք ի՞նչ տը դընիս տան անուն»:

Քեասիբ մարդ աշից[9]) էն տան չուրս պիւլիւր[10]), ասից. «Ո՛րդի, էս տան խասաբ[11]) չի, էս տուն չի՝ Սասում ի»:

Էնու անուն կուչուաւ Սասում:

Էլաւ քեասիբ, կինաց:

Վարդապիտն էր, Սանասարն էր, Բաղդասարն էր. օրէն իրիք

---

[1]) Պէտք է: [2]) Երդ է: [3]) Հետ, միասին: [4]) Փոքրիկ: [5]) Ճամբամէջ, ճանապարհի մէջտեղ: [6]) Աղքատ: [7]) Մեր: [8]) Ալևոր: [9]) Նայեց: [10]) Բոլոր շուրջը: [11]) Հաշիւ: